ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Աշոտ Մանուկյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարար

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ

Թուրքմենստան, ք. Աշխաբադ, 2018թ. մարտի 19-21-ը

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Թուրքմենստանի նախարարների կաբինետ

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Քննարկել Հայաստանի Հանրապետության և Թուրքմենստանի միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 9-րդ նիստի օրակարգային հարցերը:

6. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Այցի ընթացքում Թուրքմենստանի պետական նախարար Միրատ Արչաևի ու Հայաստանի Հանրապետության և Թուրքմենստանի միջև տնտեսական համագործակցության միջկառարավարական հանձնաժողովի անդամների հետ քննարկվել են Հանձնաժողովի 8-րդ նիստի արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման ընթացքը և առաջիկա անելիքները: Գոհունակությամբ ընդգծվել են Աշխաբադ-Երևան ուղիղ ավիաչվերթի բացման և կանոնավոր չվերթների իրականացման արդյունքում զբոսաշրջության խթանման իրական հնարավորությունները՝ նշելով չվերթների հաճախականության ավելացման հնարավորությունը: Անդրադարձ է եղել երկու երկրների միջև ապրանքաշրջանառության ծավալների ընդլայնման, արտահանման խրախուսման, ուսանողների և սպորտսմենների փոխանակման ծրագրերին: Քննարկվել են նաև բնական գազի և էլեկտրաէներգիայի առաքման և փոխանակման հնարավորություններն ու այս համատեքստում Հայաստան-Իրան-Թուրքմենստան եռակողմ համագործակցության հնարավորությունները:

Քննարկվել են նաև Հայաստանի Հանրապետության և Թուրքմենստանի միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հաջորդ՝ 9-րդ նիստի օրակարգն ու անցկացման հնարավոր ժամկետները: Նիստը տեղի է ունենալու Աշխաբադում:

7. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հանդիպման արդյունքներով փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. <u>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ</u>

Շարունակել աշխատանքները դիվանագիտական խողովակներով Հանձնաժողովի 9-րդ նիստի անցկացման ժամկետները հստակեցնելու նպատակով:

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների
և բնական պաշարների նախարար Աշոտ Մանուկյան